

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԱՆ
Տարեկան . . 12 ֆր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 ֆր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 ֆր.
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԻՍԻԿ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՅՈՍԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեմ տրուիր

Մասնաւոր տար
20 անգիրտ

ԹԻԱՊԱՐՏԸ

«Իրաւունք» ընթերցողները տեղիւն տալով հետաքրքրութեամբ մէջ պահող մեր այս թիւովը քեզ գրքի վերաճեցնող նպատակ չունենալով, բայց սակեւ կողմէ մեզ ուղղութեամբ խնդրանքներէն ստիպեալ, սկսած ենք զանի իբրեւ հիւր տպագրել, նկատելով քեւատով մեր ազգային յեղափոխական կեանքին մէջ յաճախող դեպքերու շահեկան ու խիստ հետաքրքրաշարժ հաշարածոյ մը ընծայած կրկնաւոր ընթերցանութեան, որոնց մեծագոյն մասին առիթ եւ դիտարկում պակաս է «Իրաւունք»-ի ներկայ տարւոյ թիւերը ամբողջովին հաշարելու:

Դիտարկելու եւ տարբեր կը թաղեալ եւ արդէն կէտ տպագրուած ըլլալով, միշտ կեանք ալ տպագրութեանը փոքրով առաջ կը տալու: Այսինքն երկու հատորները քանի մը շարքա յետոյ արդէն հրատարակ եղած պիտի ըլլան:

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԸ ԶՅՐԱՆՔ Է

Մասնաւոր փութաբողները այդ 2 ֆրանքը այժմէն խնայարդարեան դրկելով կրնան վստահ ըլլալ քեւ թիւՊԱՐՏԸ-ի կազմուած երկու հատորները քիչ ատենէն կտրուան: Այս պատիկ գումարը մեզ հասցնելու դիտարկեալ համար կը յայտարարենք քեւ փոխարէնը ամէն երկրի նամակագրութեամբ կրկնուենք 10 0/0 զեղչով:

ԱՅՅԵՐԵՆ ԹԵՐԹԵՐԸ

Ժող վարդի մը մէջ երբ ընթերցանութիւնը կաւեւնալ յառաջդիմութեան ձգտումն աւելցած կը նկատուի: Քանի որ այսպէս ըստեղծելու է, մենք պիտի ըսենք թէ սա վերջին տարին երբ թուրքիոյ Հայերը հսկայաբաւ յառաջդիմութեան կը ձգտին, որովհետեւ ասկէ 6—7 տարի առաջ Պոլսոյ մէջ միայն երկու օրաթերթ գոյութեամբ կը հրատարակուէին: Իսկ այսօր հոն եթէ խոշոր թերթեր ամեն օր լոյս կը տեսնեն, բնականաբար ասոնց ահագին ծախքերը ընթերցանութեանը կը վճարեն իրենց բաժնեգրիներով եւ թերթի մը օրական 10—20 փարա տալով, 95—96 թ. դեպքերուն հետեւանօք ժողովուրդի մէկ մասին արտասահման մեկնելու եւ գրաքննութեան տարօրինակ սեղմումը պահ մը կարծել տուած էին թէ Պոլսը մէկէ աւելի օրաթերթ չպիտի կրնայ ապրեցնել: Բայց ընդհակառակը երկուքին տեղ 6—7 օրաթերթ կապ:

ընցնէ այսօր, որը թուրքիոյ Հայոց մէջ ընթերցանութեան ահագին ըլլալը ցոյց տալէ զատ ուրիշ մեկնութիւն չվերցնենք: Եթէ հոն մամուլը քիչ մը ազատ ըլլալու եւ կառավարութիւնն ալ մի քիչ դիւրութիւն ընծայէր, ով գիտէ գեռ քանի թերթեր պիտի ունենար թրքահայութիւնը:

Իսկ գալով նոյն ազգի ուրիշ մէկ հատուածին, Ռուսահայուն, որ իր թուրքացի եղբայրներուն բաղդատմամբ շատ մը նիւթական առաւելութիւններ ունի եւ քիւրուութիւններ կը վայելէ, մամուլ տեսակետով երբեք նախանձելի չեղած: Ռուսահայը փոքր ծաւալով երկու օրաթերթ կը պահէ այսօր, ասոնք ալ պարտքի տակ կը խեղդուին, որովհետեւ պէտք եղածին չափ ընթերցողներ չունին: Եթէ ժողովուրդի մը ընթերցանութիւնը յառաջդիմութեան նշան ու ազգակ է, կը պարտաւորինք ըսել թէ Ռուսիոյ Հայոց յետադիմութեան մէջ է. եւ այս շատ ճշմարիտ է գոնէ ազգային տեսակէտով:

Բայց պէտք է խոստովանիլ թէ

ռուսահայ թերթերը, զէթ այսօր գոնուածները, տեղւոյն հայ հասարակութեան բաւականութիւն տալու վիճակին մէջ չեն, մինչդեռ Պոլսոյ թերթերը իրենց ալիքան պարունակութեամբ հարկ չեն ձգեր օտար թերթ կարգաւոր: Իսկ Ռուսահայը երբ ընթերցանութեան ահագին ըլլալէն թերթ մը առնելու հարկադրուած կզգայ ինքզինքը: Սակայն հոն հայ թերթերու ներկայ անբաւական վիճակին պատասխանատուն կրկին ինքը ռուսահայ հասարակութիւնն է որ չքաջաբեր իր ազգային թերթերը: ասոնք ալ ստիպեալ միայն կաղն ի կաղն կրնան:

Ռուսահայ ինտելիգենտ դասակարգը ազգային լրագրութիւնը այս աննախանձելի վիճակին մէջ լքանելով, վերջերս նոր հոսանքի մը անձնատուր եղած է. այսինքն հայ հրապարակագիրներ սկսած են ռուսերէն նոր նոր թերթերու արտօնութիւններ առնել: քանի մը նոր թերթեր կը հիմնուին կովկասի մէջ Հայերու ձեռքով ու ռուս լեզուաւ: Այս նոր հրատարակութիւնները—քանի որ զանոնք գրողները Հայեր են—քիչ մըն ալ պիտի չլատեն Տփղիսի հայերէն թերթերու նիւթական ուժը: Անվիճելի է թէ լեզուի մը կազդուրում ու կեանք տուողը վարժարանը եւ պարբերական մամուլն է: մեր ռուսահայ եղբայրները իրենց ազգային վարժարաններէն զրկուելէ վերջ՝ փոխանակ գոնէ ազգային մամուլին ալ աւելի ուժ տալու, իրենց այս նոր ընթացքով զանի աւելի կը լքեն, որով շատ մութ կը տեսնուի Ռուսահայուն ապագան՝ լեզուի եւ ազգային տեսակէտով:

Ո՛րք են ռուսահայ շրջէն ազգասէրները: ո՛րք են անոնց ինտելիգենտ երիտասարդները: անոնց մէկ մասը արտասահմանի մէջ, թուրքի վրայ, պողպատ կը ծամէ ու կայծակ կը թընէ, թրքահայը թող ու մեղկ կանուանէ եւ անոր գլխին պատգամներ կորոտայ: Լաւագոյն չէ՞ որ այդ շրջանները, այդ ինտելիգենտները ուշադրութիւն նին քիչ մըն ալ իրենց ծննդավայրը՝ կովկաս դարձնեն, եթէ երբ:

բէք անկեղծ ազգասէրներ են, հոն տեղի թմրած Հայերուն մտքերը ու սրտերը ելեքտրականացնեն իրենց արամազդական պատգամներով ու պղուտոնական շանթերով:

ԳՈՒՐԳԷՍ

ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ

ԺՈՂՈՎԸ

Տարիներէ ի վեր Ամերիկայի Հնչակեան եւ Դաշնակցական երկու խումբերուն եւ իրենց թերթերուն միջեւ բուն եւ տաղտալի վիճաբանութիւններ ու կռիւններ տեղի կունենային: այսպէս որ այս «ըսի ըսաւ»-ի վիճակները ամէն ազգագուտ ձեռնարկութիւն խանգարելու, հասարակութիւնը շուարեցնելու կը ծառայէին: Այս անպատեհութեան վերջ մը տալու եւ երկու խումբերը լրջօրէն իրարու միտք լուսաբանելու նպատակաւ, վերջերս լաւ խորհուրդ մը յղացուած էր: այսինքն ոչ-կուսակցականներու ներկայութեան վիճաբանական ժողով մը կազմել, երկու կողմէ կարգուած վիճաբանողներու փաստերը ու բացատրութիւնները լսելու:

Այս խորհուրդը իրագործուեցաւ: վիճաբանական ժողովները տեղի ունեցան Ուստրի մէջ: Երկու կողմի հաւանութեամբ կազմուած էր ոչ-կուսակցականներէ ընտրուած Յանձնախումբ մը, որուն տուած էին երկուստեք ստորագրուած հանձնագրութիւնը, որով Յանձնախումբին միայն իրաւունք կը տրուէր վիճաբանութիւններու արձանագրութիւնները եւ եզրակացութիւնը հայ մամուլին միջոցաւ հասարակութեան ծանօթացնել:

Ահա այդ Յանձնախումբին պաշտօնապէս հրատարակութեան տրուած նամակը:

ՈՒՍԹԸՐ, 23 Սեպտ.

... Խորագիր

Երկու կուսակցութեանց «Հնչակեան» եւ «Դաշնակցական»-ի միջեւ տեղի ունեցած ծանօթ վիճաբանական ժողովներուն մէջ, հետեւեալ նիւթոց վրայ վիճաբանուեցաւ:
Ա. Միութիւն:

Բ. Կեղերոնացում եւ Ապակեղերոնացում .

Գ. Յատուկ ժողով մը ոչ կուսակցականներու համար, ուր իւրաքանչիւր ոք իր տպաւորութիւնը պիտի յայտնէր յիշեալ վիճարանութեանց առթիւ :

Ըստ փափաքանաց ժողովրդեան եւ ըստ որոշմամբ Յանձնախմբիս, վերոյիշեալ ժողովներու արձանագրութիւնը հրատարակութեան պիտի տրուէին ի գիտութիւն հասարակութեան :

Նկատելով որ բանաւոր պատճառներով արձանագրութեանց հրատարակութիւնն տեղի չունեցաւ մինչեւ արդ, եւ թերեւս քիչ մըն ալ ուշանայ :

Եւ նկատելով որ շատ մը ազգայիններ հեռաւոր ու մերձաւոր տեղերէ առանձինն ու հրապարակաւ Յանձնախմբէն բացաւորութիւն կը պահանջեն, անոնց գոհացում տալու համար պարտ կը համարինք հետեւեալը գրել արձանագրութեանց հրատարակումէն առաջ :

Երրորդ ժողովը որ յատկացուած էր ոչ կուսակցականներուն, իրենց տպաւորութիւնը յայտնելու, բոլորն ալ ի նպատակ շնչակեանութեան խօսեցանք, եւ համեմատելով զայն Դաշնակցականներու ազգութեան հետ, գովեցին շնչակեաններու ուղղութիւնը :

Յանձնախմբս նկատի առնելով հայրենիքի գիրքը ու կացութիւնը եւ մեր սիրելի ազգայիններու դժբաղդ վիճակը՝ մենք ալ համակարծիք ենք ոչ կուսակցականներու, կարծիքին, եւ ըստ այնմ մեր համակրանաց քուէն տալով՝ շնչակեան կուսակցութեան կը մաղթենք յաջողութիւն ի նպատակ Հայկական Դատին :

Ի դիմաց ոչ կուսակցական Յանձնախմբին

Ատենադպիր Ատենապետ
Յարութիւն Մելիք Տր. Ս. Պ. Մելիքի
Անդամք
Պօղոս Մ. Գուրազնեան. Կ. Ղ. Սաւրոյեան

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Բ.

Բայց Լինչի աշխատասիրութեան տիրականօրէն գնահատելի մասը ապահովութեամբ Տաճկահայաստանի ու Տաճկահայաստանցիին նուիրած հատորն է : Պ. Տօնապետեան, Լինչի այս հատորը, մասնաւորապէս հեղինակին հայկական խնդրոյն ու յեղափոխական արդի շարժման վրայ տեսութիւնները ճշգրտօրէն պատկերացնել աշխատած է . հակիրճ կերպով կը ներկայացնէ «Հայկական խնդիր» ըստաւելին ծագումը, Պէրլինի վեհաժողովին դիմող հայ պատկերակութեան պարագաները, Եւրոպայի միապարտ մոռացումը . կորսնէ այդ մոռացումին վերաբերելը : Կը յիշատակէ նոյն ատենի անգլիական դեսպան Մր. Կոչէնի թրքահայ ազգաբնակչութեան թուոյն մասին համոզումը, որ միանգամայն Պատրիարքարանի թէ Դրանց ցոյց տուած վիճակացոյցներու ճշգրտութեանը նկատմամբ կասկած կը յայտնէր ու կը կարծէր որ «Եթէ Հայերը փոքրամասնութիւն են, բուն իսկ Հայերուն համար վտանգաւոր պիտի լինի, նոցա տալ այն վարչական զրութիւնը, որը պիտի տայինք եթէ նոքա մեծամասնութիւն լինէին» : Վերջապէս ցոյց կուտայ թէ ինչպէս Հայերու ի նպատակ Դրան տեղեկագիր ուղղող միակ պետութիւնը՝ Անգլիա ալ, Գերմանիոյ առարկութեանցը հանդէպ խնդրէն ձեռք քաշեց :

Յետոյ Հ. Լինչ խօսիւ կը քննադատէ Պէրլինի Դաշնագրին խմբագրութիւնը՝ ուր «Հայերով բնակուած նահանգներ» բացատրութիւնը կայ, զոր «անգղոս» մը կը համարի . «Ինչպէս կարելի է լուծել այս պարբերութիւնը . Հայերը բովանդակ Ասիոյ մէջ ցանուցիր են . պահանջել Դոնից բարենորոգումներ ի ներմուծումն «Հայերով բնակուած նահանգներում», հրակել նոցա անթերի կատարմանը, գրեթէ այնքան մի դժուարին ձեռնարկ էր իսկապէս, որքան եթէ Եւրոպան միտք յայտնէր իւր խնամակալութեան տակ

առնելու ամբողջ թրքական կայսրութիւնը :

Անցնելով հայ յեղափոխութեան արդի շարժման եւ հայկական կոտորածներուն, Լինչ ալ շատ մը մեծանուն հայասէրներու, Պաշտնեւոր, Գոնդէնտներու, Տընի Գոչէնեւոր, Տը Մուշեղեւոր նման, այս առթիւ իր նկատողութեանցը մէջ գտնէ մեր տենդոտ յեղափոխականները զգոն ձգէր . սակայն, ինչպէս Պ. Տօնապետեան այնքան իրաւամբ դիտել կուտայ, նա ըմտածում է իր մի քաղաքագէտ որ արդեամբ բարեացակամ է հայ ժողովուրդին . ապացոյց իւր բարոյական եւ նիւթական ահագին զոհողութիւնները, որ դրել է մեր հայրենիքի ուսումնասիրութեան եւ նորադատի պաշտպանութեան համար, իւր պատկանելի գործով :

Լինչ նախ կը ջանայ ցոյց տալ սատարօրինակ պարագան որ, մեծ կոտորածները զլխաւորաբար բուն Հայաստանի սահմաններէն դուրս տեղի ունեցան (.), ինչպէս Սըվազ, Տրապիզոն, Տիգրանակերտ, Մարաշ, Այնթապ, Ուրֆա, Նոյնիսկ Սասուն, որ Մուշի հարաւակողմը կը գտնուի . ու հետամտելով հայկական շարժման սկզբնապատճառները քննելու եւ որոշելու, կը յանգի երկու հետեւութեանց . նախ՝ մահմետական ու քրիստոնէի միջեւ քաղաքական ու ընկերային անհասարկութիւնը, որը, որչափ որ կրօնական պաշտամունքի տեսակէտով գոյութիւն չունենայ, Հայերու առջեւ կը փակէ զինուորական անպարէզը, բարձր պաշտօնները, կարգիւն նոյնիսկ ինքնապաշտպանութեան համար զէնքի գործածութիւնը ու նահանգային կառավարութեանց մէջէն անոնց մասնակցութիւնը կը վտարէ : «Ի նպատակ քաղաքական հասարակութեան հանդիսաւորապէս յայտարարուած հրովարակները մնացել են անգործադրելի, եւ յուսահատ սրբաւոր ի դուր ակնկալուոյց սպասում են օրէնքի խոստումներին : Միեւնոյն ժամանակ Արեւմուտքի ձայնը լսելի էր լինում աւելի բարձր եւ աւելի մօտ, եւ արեւելեան Եւրոպայի օրինակը դարձաւ իւր յոյսի փարոս ապստամբական ոգու արծարծմանը, միանգամ

ընդ միշտ ազատուելու համար միւսիւմանական լուծից» :

Բայց Լինչ մանուշագ բացատրելու կաշխատի թէ «շարժումը ինչո՞ւ Հայաստանի բուն սահմանից դուրս ընկած ցանուցիր հասարակութիւններին մէջ հիմք գտաւ», ու սա եզրակացութեան կուգայ . «1890ի եւ 1891ի բուն Հայաստանի մէջ տեղի ունեցած պայթիւնները զսպուեցան ջլատիչ խրատութեամբ . Հայաստանի Հայերի իրաւանց բռնաբարութիւնը շատ աւելի մեծ էր եւ զրկւնքը շատ աւելի ծանր . այսուամենայնիւ, վերջին փորձութիւնի նոքա լաւ հասկացել էին թէ իրենց չինչ էր մնում, բայց միայն տոկալ ըստ եւ մուշ, իրենց մարդկային իրաւունքների վերահաստատման համար առանց նոր փորձի դիմելու : Հիմաւայէս, «հարկը այնպէս պահանջեց որ, իւր ծննդավայրում զսպուած շարժումը պայթեցան նոր հողի վրայ, որը յայտնի էր թէ յեղկուսակցութեանց համար բնիկ հողը ապրող իրենց հայրենակիցների ոգին թուլացել չէր այլեւս» : Այնպէս որ «մէկ կողմէն հայ գործիչներին ձեռքի հետեւանք, եւ միւս կողմէն տեղային կառավարական իշխանութիւններին չարամէք արարքները ծագումն տուին կոտորածներին» թէեւ, հեղինակին կարծիքով, արտաքույն Հայաստանի այդ շարժումին ենթակայ Հայերը զօգնականութեան մեծ շարժառիթներ չունէին, ինչպէս ունին իրենց Հայաստանցի կրօնակիցները . անոնք, ընդհանրապէս, քիւրտերու շահատակութեանց չըջանալէն ալ գերծ, միայն տանց ազգի խտրութեան ամէն քրիստոնէի վիճակուած անհաւասարութեանց կը մատնուէին :

Տ.

ԳՐԱՆՈՒՅ ԿՈՒՉՈՒԻ

Տօպրիչի Թադ. Թորհուրդը կը խնդրէ ծանուցանել թէ տեղւոյն եկեղեցւոյն մէջ պաշտօնավարելու համար քահանայի մը պէտք կայ : Որ քահանան որ կուզէ հոն պաշտօնավարել, դիմելու է Տօպրիչի Թադ. Թորհուրդին : 1—4

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(25)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԻՒՆԱՆԻ ԹՈՒԱՅԱՆԸ...

— Դո՛րձ... Օ՛հ, տեսնելու էք այդ մարդը . բոլորովին անշուք ու աղքատ գիւղի մը մէջ քաշուած է ու նպարավաճառի խանութ մը ունի : Տիւլպարը բարձրագոյն վարժարան մը զրկած է : Իր միակ յոյսը, միակ միտքարութիւնը, վերջապէս միակ հարստութիւնն այդ աղջիկն է : Իր աշխարհքը անոր վրայ կը գտնուի :

— Ինչո՞ւ Ռէս Մէլիք... մըմնից Տէր Օհան հոգւոյն ամբողջ դառնութիւնը պատկերացնելով իր հրեշտակային կերպարանքին վրայ, իցիւ թէ ներման արժանանար քեզի պէս :

- Միթէ՛ ես ներման արժանացած եմ :
- Հապա ինչպէ՞ս ազատած ես :
- Ամենաբարին Աստուծոյ առաջնորդութեամբ :
- Ըսել է թէ՛ փախստական մըն ես :
- Այո՛, փախստական մըն եմ :
- Կ. Պօլսոյ բանալէն :

— Ո՛չ, Դարպ-Թարապուտի թիարանէն... անա՛նչանա :

Ու թեւին չապիկը վեր առնելով ցոյց տուաւ ա՛յն նշանը զոր կուենեան թիարարները չանհետանալու համար :

Տէր Օհան սարսուռով մը համակուած մօտեցաւ վանականին ու անա՛ ինչ որ կարգաց անոր ետանկիւնաճեւ նշանին մէջ :

Դարպ-Թարապուտի
Բերդ
18...

— Օ՛հ, գարշելի մարդի՛կ, մըմնից Տէր Օհան զղուանքով մը ասիկա կրնէ որ թիարարաւ չի կարենայ ազատել իրենց ձեռքէն, անանկ չէ՞ :

— Այո՛, Բայց շատ դիւրին կերպ մը կայ զայն ջնջելու, ընդհատեց Վանական :

— Ուրեմն ինչո՞ւ համար կը թողու :
— Կը թողու՞մ, որովհետեւ ասիկա իմ մէջս արդար վրէժ մը կարթնցնէ, Տէր Հայր : Կը թողու՞մ, որովհետեւ ասիկա չը մոռցնէր այն երախտագիտութիւնը զոր Աստուծմէ ետք՝ մարդու մը կը պարտիմ աշխարհքիս մէջ : Օ՛հ, ասիկա, մէկ խօսքով, թուրք կառավարութեան մէկ բարբարոսական նշանն է զոր պիտի պահեմ որչափ որ երակներու արիւնը չէ սառած, որչափ որ նպատակիս չեմ հասած :

— Մարդու մի ըսել, ընդհատեց Տէր Օհան խորին հետաքրքրութեամբ մը :
— Այո՛ :

— Ո՞վ է այդ մարդը :

— Ժամանակ պիտի գայ, որ դուք ալ պիտի ճանչնաք զինքը :

Տէր Օհան չկրկնեց իր հարցումը՝ այս վերապահութեանէն ետքը :

— Ինձի նայեցէ՛ք, Տէր Հայր, վրայ բերաւ Վանական, հանդարտ բայց ճնշուած ձայնով մը . կարելի չէ՞ դաւաճան քահանան տեսնել :

— Կարելի է... բայց ի՞նչ պիտի ընես, նկատել տուաւ Տէր Օհան :

— Միա՛յն թէ անոր դէմքը զիտել կուզեմ :

— Խիստ լա՛ւ . իրեկուան դէմ հոն կերթանք, Հիմայ միասին ճաշելու երթանք :

Ու երկու բարի հոգիները պարտէզէն ելնելով հասան այն փողոցը, ուր կը գտնուէր Ռէս Մէլիքի քանդուած տունը :

— Եւ նայի՛ս, փափաց Տէր Օհան՝ դառնութեամբ մատնանի ընելով քանդուած տունին վիճակը :

— Այո՛, անիրաւութեան տեսարանն է այդ, թոթովեց Վանական՝ իր աչքերու արցունքը սրբելով :

Տէր Օհան չչարունակեց : Տունը մտան ու ճաշեցին :

— Այս բոլորը մէկդի թողո՛ւք, Տէր Հայր, ըսաւ Վանական ճաշէն ետքը, հիմակ ծանր պարտականութիւն մը կայ զոր կատարելու խոստացած եմ չորս տարիներ առաջ, բայց բաղդին չարադէտ բերմամբ չեմ յաջողալ :

(Շարունակելի)

ՕՐՈՒՆԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբեր 14ին Ֆրանսայի երեսփոխանական ժողովոյն երկրորդ նստաշրջանին բացումը տեղի ունեցաւ. կրօնական միաբանութեանց ու ազատ դատարարական ծանօթ խնդիրները, տեղի ունեցած երեսփոխանական վեճաբանութեանց մէջ ամենէն կարեւորներն, ամենէն ուշագրաւներն են: Երբ Ապրիլ ու Մայիս ամիսներու երեսփոխանական նոր ընտրութեանց հետեւանքով, վաղեմէ ֆուսսի դահլէճին կը յաջորդէր էմիլ Գոնպի նախարարութիւնը, որուն կը մասնակցէր ծայրայեղ գաղափարներու ծառայող արմատական-ընկերվարական Գամիլ Բէլըզանը, իբր ծովային նախարար տարակոյս չէր մնացած թէ, նորակազմ նախարարութիւնը, մանաւանդ նոր ընտրութեանց քաջալերանքէն ազդուած, իր նախորդին պայքարի ու յետադիմական նախապաշարման գէտ ընկերային յեղաշրջումի քաղաքականութիւնը պիտի շարունակէր, աւելի լայն ծրագրի մը վրայ, աւելի կորովաւոր ու ապահով ընթացքով մը. ընկերվարական կուսակցութեան ու միաբանական բոլոր երեսփոխաններու ամենէն պերճախօս ատենաբանը՝ Ժոն Ժարէս, իր վերընտրութեամբ արտասանած առաջին ճառովը, նորակազմ կառավարութեան հանդիսաւորապէս կը բերէր ընկերվարական երեսփոխաններու գործակցութիւնը:

Այսպէս ուրեմն երեք հատուածներ, էմիլ Գոնպի նախարարութիւնը իրենց հովանաւորութեանը տակ կառնէին. արմատական, արմատական-ընկերվարական ու ընկերվարական, որոնք կառավարութեան պիտի ապահովէին 100 ձայնի մեծամասնութիւն մը, պահպանողական և յառաջդիմական երեսփոխաններու դէմ:

Երեսփոխանական ժողովոյ այդ առաջին նստաշրջանին փակումէն վերջն է որ կառավարութիւնը գործադրութեանը հետամտեցաւ խոստումներու այն յայտարարութեանց՝ զորոնք առաջին անգամ խորհրդարանին առջեւ ներկայանալուն պատկերացուցներ էր:

Ուրիշ անգամ խօսած ենք արդէն կրօնական միաբանութեանց դէմ Ս. Գոնպի պաղարին ու խիզախ քաղաքականութեան մասին. Հոկտեմբեր 14ին բացուած իր երկրորդ նստաշրջանին մէջ, խորհրդարանը զլիաւորաբար կը զբաղի էմիլ Գոնպի այդ առթիւ ունեցած վարժունքին մասին եղած հարցապնդմանց վիճաբանութեամբը. յետադիմական ու կղերական կուսակցութեանց երկու համաբաւոր խորհաններուն՝ Տընի Գոնէնի և Ալպէս տը Մունի-երկուքն ալ նշանաւոր հայաստեաներ—հարցա-

պնդումներէն ետք, նախկին նախարարապետ Ռիպոյի և ընդդիմադիր յառաջդիմականներու վարիչ Ռընէ Մուլիէրի պարսաւիչ ճառերէն ետք, էմիլ Գոնպ կառավարութեան քաղաքականութիւնը պաշտպանելով, իր յայտարարութեանը ինպիսով 96 ձայնի առաւելութիւն մը յաջողցուց. կառավարութեան յաղթանակը ուրեմն կատարեալ է: Գետոյ էմիլ Գոնպ, յայտարարելէ ետք թէ «իր բոլոր իրազորած նախաքայլը, նախաբանն է ռամկավարական այն ընկերային բարենորոգմանց, որոնց Ֆրանսա ակնդէտ կը սպասէ», Երեսփոխանական ժողովոյ քուէարկելու առաւել նախորդ տարւոյ հուլիս ամսոյն մէջ քուէարկուած կրօնական միաբանութեանց գոյութիւնը կանոնաւորող օրէնքին վրայ լրացուցիչ մաս մը, որուն համեմատ՝ այդ օրէնքին—զոր ամբողջութեամբ ընթերցողներուն արդէն ծանօթացուցած ենք—անսաստողը ու առանց արտօնութիւն խնդրելու միաբանական նոր հիմնարկութիւններ բացողը կամ վանոնք նպաստաւորողը զանազան պատիժներու պիտի ենթարկուի. այս լրացուցիչ մասին քուէարկութեամբը, կառավարութիւնը միանգամ ընդ միշտ Պաղատիոյ դրողութեանց ցուալի դէպքերու կրկնութեանը առաջը կառնէ:

Կառավարութիւնը այժմ դատարարականութեան ազատութեան խնդրին կարգադրութեամբը պիտի զբաղի. արդէն հեռագիրը ծանուց թէ նախարարներու խորհուրդը որոշած է Ֆալլուի օրէնքը շնչելու օրինագիծ մը խորհրդարանին ներկայացնել. «Ֆալլուի օրէնք» ըսուածը շնչելով, կառավարութիւնը իրաւունք ունեցած պիտի ըլլայ մօտէն հսկելու, որ ուսումնական որ և է հաստատութեան մէջ հանրապետական սկզբունքներու ներհակ դատարարականութիւն մը չը տրուի. ֆրանսացի դպրոցականներու արդարեւ, ֆրանսացի տղայ մը միայն միթէ զինքը ծնող անհատներու քմահաճոյքին ենթարկուելու է, թէ ոչ, իբր երկրին մէկ անգամը, պետութիւնն ալ պարտականութիւն ունի անոր հանրապետական դատարարականութիւն մը ապահովելու. Ֆալլուի օրէնքի շնչումը վերջին ենթադրութիւնը պիտի նուիրագործէ, և ասկէ վերջ կառավարութիւնը տղու մը դատարարականութեան հսկելու պաշտօնը միմիայն ծնողքին պիտի չը թողու, ինչպէս շատ ատեն կայ որ կին էականը իրենց այրերուն բացարձակ կալուածները համարուելէ ալ դադրած են:

Տ. Է.

ՅՈՅՍ ԹԱՏԵՐԱՌՈՒՄԲԸ

Թատերաբեմի դերը մէկէ աւելի անգամներ, բացատրած ենք այս սինկնիւրու մէջ: ՅՈՅՍ դերասանական նոր խումբը, առաջնորդութեամբ Տ. Պապանանի, իւր ընտրած լուրջ և հրահանգիչ թատերախաղերովը, պէտք է խոստովանի թէ իւր ստանձնած դերի բարձրութեան վրայ կը գտնուի: Այս թատերախումբին կազմութեան հին ի վեր ներկայացուցած 8—10 թատերախաղերը գեղընտիր կտորներ են. յաջողութեան համար միջավայրին ներածին չափ ամեն կարելի միջոց խումբը չը խնայիր. անկէ անկարելին սպասել անհրաժեշտ է: Վեհեր, աշխուհ, բարոյականը ու շքեղը պահանջել շատ դիւրին է. բայց այդ պահանջները իրականացնելու մէջն է դժուարութիւնը. պահանջները, վեհերն ու շքեղին յարգը ճանչցողները պէտք է այդ դժուարութիւնը հարթելու մէջ մի քիչ աշխկին, քաջալերեն նորակազմ խումբը, որ ինչպէս կերեւայ, որոշած է չընկրկիլ դժուարութեանց առջեւ, ակնկալելով թէ ներառաջակ թատերասէր դասակարգը իրեն ներցուկ կըլլայ, գոնէ ժամանակ մը մինչեւ որ հասարակութեան ստուար մեծամասնութիւնը ճշակ ստանայ և ընտելանայ լուրջ տրամներու:

Խումբին այս արդար ակնկալութիւնը ցարդ մասամբ միայն պսակուած է. հայ հասարակութեան մէկ պզտիկ մասն է որ իր ներկալութեամբ կը քաջալերէ դերասանները, սրահի մը կէսը հագիւ լեցնելով:

Գներուն սովորականէն աւելի դիւրամատչելի ըլլալուն հակառակ՝ ցաւալի է ըսել թէ շատեր խումբին կազմութեան ի վեր դեռ չեն այցելած «Սանդրալ» թատերասրահը. կը հաւատանք թէ մէկ երկու երկնայիններու ներկայգլուտն ուղղը գոհ պիտի մնայ, և անկէ վերջ պիտի փափսքի գոնէ շաբաթը անգամ մը հանդիսատեսը ըլլալ և օգտուել ներկայացուած այն ընտիր ու հրահանգիչ տրամներէն՝ որոնք մեծաւ մասամբ անկանաւոր հեղինակներու արտադրութիւններ են:

Գ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս մեր նախորդ թիւերով հաղորդած էինք, Պոլսոյ խառն ժողովոյ վերջին նիստին մէջ բացուեցաւ Մարտիրոս վաճառականներէն կենսարացի հանգուցեալ Թովհանէս կիւմշեանի կտակը. այս կտակը կը տրամադրէ որ 10 հազար ոսկիին կէսը գործածութիւն կալուած գնելու և միւս կէսը տո-

կոսի դրուի. 10,000 ոսկիի հասոյթէն 40 0/0 տրուի կենսարոյ Սարգիս կիւմշեան վաճառարին. 10 0/0 էջմիածնի Աթոռին. 10 0/0 Երուսաղէմի. 5 0/0 Հիւանդանոցին. 15 0/0 դպրոցական գրքեր տպագրելու և կարօտ տղաքներու ձրի բաժնելու: Մնացեալ 20 0/0 ալ մայր գումարին վրայ բարգաւելու է. իսկ այս վաղըքին միջոցով ժամանակին Պատրիարքը ըլլալու է: Քաղաքական ժողովն ալ, իր նստին մէջ որոշած է, այս կտակի գործադրութեան հսկելու պաշտօնով, երեք հոգեք բաղկացեալ, Պատրիարքին նախագահութեամբը. խնամակալութիւն մը կազմել:

— Հանգուցեալ Թովհանէս փաշայի քոյրը, Տիկին Աղաւնի Գաղապեան Պոլսոյ մէջ վախճանած է:

— Աղեքսանդրիոյ Թադ. Խորհրդոյն Ատենապետ Պօղոս Նուպար փաշա ու փոխ-ատենապետ Բարթող պէյ, տեղական կարգ մը անհամաձայնութեանց հետեւանքով, իրենց հրաժարականները մատուցած են տեղւոյն առաջնորդին:

— Կայսերական իրատէ մը, Հայադգի ծանօթ բժիշկ ու բժշկական վարժարանի նախկին ուսուցիչ Տօթթ. Միքայէլ Խօրա. սանճրանի 1048 զրուշ ամսական յատկացուցած է:

— Նոյնպէս Սոսոյ միաբան տըխրահաչակ Մամիկոնեան Աբրահամ Եպիսկոպոսի 500 զրուշ ամսաթոշակ կապուած է կառավարութեան:

— Տիկին Տիւրուհի Ս. Կիւլպէնկեան, իր որդւոյն ամուսնութեանը առթիւ, Ազգ. Հիւանդանոցին 100 ոսկիի նուիրատուութիւն մը ըրած է:

— Գարակեօզեան կտակի Թանձ. նախորդը, իր վերջին նիստին մէջ, հաստատուելիք Որբանոցին եկամուտ ըլլալու համար գընուելիք կալուածներու մասին խորհրդակցութիւն կատարած է. տակաւին յայտնի չէ խեղճիւնը: Բաւաս Օթէլը պիտի գնուի, թէ աւելի յարմար չէնք մը. Գանձաժողովին մէջ երկու կարծիք կայ. մէկ կողմը կուգէ շնորհքով մեծ կտոր մը գնել, իսկ միւս կողմը կառավարկէ ամբողջ դրամը (16,000 ոսկի) մէկ կտորի չը կապելով, քանի մը կալուած գնել իրանգամայն:

— Վրաստանի Էքզարխ Ալէքսի Արքեպիսկոպոսը Ս. Էջմիածին այցելութիւն տալով, Կիւմաւորուած է վանքին միաբանութեան կողմէ: Գետոյ վեհարանին մէջ Ամենայն Հայոց Հայրապետին հետ տեսակցելով, նահանգապետին հետ վեհարանը ճաշած է, ճաշէն յետոյ Էքզարխը Գեորգեան Ճեմարանը այցելած է:

— Կը իշուի թէ Հոռոմայ Աթոռէն բաժնուած և անկախ եկեղեցի կազմած Լեհերու կողմէ Ամբրիկայի առաջնորդ Ուրաճեան

եպիսկոպի զիմում եղած էր, որպէս զի իրենց քահանաները Հայ եկեղեցիի կողմէ ձեռնադրուի. Սարաճեան եպիսկոպոսն ալ տալով իջ. միանձնէն հրահանգ ուղարկելով Ն. Ս. Օթովիւնը յատուկ կոն. դաւով մը արտօնած է Ամերիկայի Առաջնորդը այդ քահանաները ձեռնադրելու համար: Գալով Եպիսկոպոսական ձեռնադրութեան, կանխաւ գիտնալ ուղարկելով իւր հոգումը, այժմ իրենց Եկեղեցւոյն պետ զո՞վ պիտի ընդունին, ու արդեօք իրենց եպիսկոպոսները միշտ էլ միմեծին ձեռնադրել տալ պիտի ընդունին: Այս առթիւ, Սարաճեան Եպս. իրեն զիմում ընդունելը խորհրդակցութեան համար Նիւ Եօրք հրահարած է:

ԷՐՄԷՆԻՍՏԱՆ ԱՆՎԱԼԸ

(Եվդիկի Նիւսիսիսիէն իւր խօսքով)

Սիւլիման և Բիզա Արկոն նամ քեօյէ տախի հիւճամ իթտիւէր վէ 30 առէտ պէօյիւք հայկան սիր. տիւլէր. սօնրա մէզքիւք հայկան. լարը կէրի վէրմէք իշին պիւրէր լիրա թալէպ իթտիւէր: Բարայը ալտըգտան սօնրա հայկանլարը տէ վէրմէտիւէր: Քէօյիւլէր Պուլա. նըգ գայմագամընա շիքեայէթ իթ. մէքլէ պէրապէր, իքի էզըրեայար շէքեպէթլէրինէ տէպամ իտէրէք քէօյիւ եաղմայա վէրտիւլէր վէ 55 հայկան թէքրար սիրտիւլէր. պու. նուլէ սիրտիւլիւ հայկանլարըն մըգտարը՝ 30 մանտա, 50 ինէկ վէ 65 էօքիւզէ պալիդ օլտու:

Քէզուրլու աշիրէթինտէն Ֆըրիթ նամ քիւրտ էլլէնէ վէ քէօյի չիւն Բէրթաք քէօյտէն իքի էր. մէնի էօլտիւրտիւ վէ Մէլիք Կու. եանը եարէլէտի:

Համիտիյէ քիւրտլէրի Զըհօր վէ խմբլուր. քէօյլէրի եաղմայա վէր. տիւլէր: Էրզրումտան Մուշա կիթ. մէքտէ օլան քէրվանա հիւճիւմէ, էրմէնիւլէրի տիկէր եօլըլարտան ալըրուպ, սօյտուլար, պուլարտան պիւրինի եարէտիւլէր վէ տիկէր պի. ըրինի տէ էօլտիւրտիւլէր:

Պալազը աշիրէթինտէն Շըկօ. տան նամ քիւրտ Սասուն գազա. սընտա թաղապանք քէօյիւն հայ վանաթընտան չօղունու պիր ալ էվվէլ գապթ իթտի: Սահիպլէրի հիւքիւմէթէ շիքեայէթ իթտիւլէր. հիւքիւմէթ տէրհալ պու շիքեայէ. թի Շըկօտանա պիւրտիւր: պու իսէ թէքրար թաղապանքա կէլուպ, գալան հայկանլարը սիրտիւ վէ չօք էրմէնիւլէր էօլտիւրտիւ: Սօն. րա Լորտէնձօր քէօյիւնէ կիտուպ օրանըն պիւթիւն քըշ թէտարի. գաթընը եաքտը:

Նիհայէթ խուլթ, Բունաշէն նա. հիւլէրիտէ էրմէնիւլէր քիւրտլէ. ըրին զուլումլարընա, խըլսրզըրգ լարընա վէ զըզլարը աշըրուպ ճէպ.

րէն իսլամ իթմէլէրինէ տալանա. մատըզլարընտան, քէնտի խանէ. լէրինի թէրք իթտիւլէր:

Իշպու մաթէմիաք մալիւմաթ. լարը վէրէն մուխպիր Պէրլին ահա. նամէսինի զիքը իտուպ, թիւր. քիւրտա հուգուգը ինսսիլէնին մուհաֆազաք իշին պիր իտարէ. նին թըշքիլինի էվրոքատան իս. թիրհամ իտէյօր:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐՔԻԱ

Սուլթան սըրպ էլլիսի Մ. Կրուիչէ պիրիճի «Օսմանյը» նի. շանը իհտա իթտի: Պու միւնա. սիպէթլէ Մ. Կրու չ' հուգուրը շահանէյէ գապուլ օլընմասընտա, էսկի Սերպիանըն ահվալընտան տօլարը Պապը Ալիյէ իթմիշ օլտըրը միւրաճաթլարտան պահս իթմէ. սինտէ, Սուլթան օլ պապտա էմիրլէր վէրմիշ օլտըրը վէ պինաէն ալէյհ օրալարըն ահվալը թէսքին վէ թախֆիթ օլընաճաղընը պէյաւիլէ, քէնտիսի ումում թապասընըն էմիլիյէթ ու առայիշտէ պուլընմա. լարընա արզուքէշ (.) օլտըրընը սէօյլէմիշ տիր:

— Թուրքիան բաշտընը րէյասէ թի իլէ Եսլթայա կէօնտէրիլմիշ օլան հէյէթի մախսուսէ Հոկտեմ. բեր 17տէ Զարըն հուգուրընա գա. պուլ օլընմիշ վէ Սուլթանըն հա. տիկեարլարընը թապտիմ իթմիշ տիր: Ս ազլամ հէյէթի մէզքիւրէ զիյաֆէթ վէրիւուպ, Զար Սուլ. թանըն նամընա պատէ նուշ իթմիշ տիր:

— Իթմալիա տօնանմասը Էլան Լօհէյա սուլարընտա Միտի առա. սընա եագրն պուլընլօր: Գուր. սանլարա գարշը Պապը Ալի վա. տընը իճրա իտէնէ գատար վա. բօրլար թիւրք սուլարընտան չէ. քիլմէյէճէքլէր:

— Ատէն մէսէլէսի ինկիլթէրա. նըն թալէպի իւզրէ հալլ օլընմիշ տըր. եանի թիւրք աքըրլէրի միւնազալը արաղիի թէրք իտէ ճէքլէր վէ սօնրա մէսէլէ թէտգրգ օլընաճաք. Պապը Ալի մէսէլէնին թէտգրգընտան սօնրա աքըրլէրի կէրի չէրմէք իսթէմիշ իտի իսէտէ, ինկիլթլէր' թիւրք աքըրլէրի չէ. քիլմէքսիլին թէտգրգաթա կիրիշ. մէյէճէքլէրինի վէ ճէպրէն թիւրք. լէրի գօվաճազլարընը գաթիէն պիւրտիւլէր իտիլէր:

— Սօֆիա թարիգի իլէ Սթան. պօլտան 30 Հոկտեմբեր թարիխի թաւա պիւրտիւլէրիինէ պինաէն, Պապը Ալի էլլիլէրէ իսպար իթ միշ քի' Բուսճուգտա Մաթէթո նիա գօմիթէլէրի սօգագտա պուլ. տըզլարը իսլամլարը էօլտիւրմէքտէ վէ պիւթիւն իսլամլարը պիթիւրէ. ճէկիզ տէմէքտէ տիրլէր վէ Բուս ճուգ հիւքիւմէթի իսլամլարը մու.

հաֆազայա մուգթէտիր օլմատը. ղընը պէյան իթմիշ իմիշ...

Պապը Ալի պէօյլէ պիր բուեա կէօրմիւշ օլմալը. Բուսճուգ պուլ. կարլարը Անատօլուտաքի իսլամ. լարա թէշպիհ օլընմալ: Պուլ. կարիտաա Համիտիյէ ալալարը վէ պաշըպօղուգ չէթէլէրի եօգ տըր. պուլկար գօմիթէլէր մէտէնիլէթ վէ ինսանիլէթ թարիգիինտէն շաշ. մազլար. Բուսճուգ հիւքիւմէթի տէ Պապը Ալիին մէմուրլարըն. տան իմիթէլէքքիլ տէկիլ տիր. շու հալտէ միւսթէրիհ օլտընլօր:

— Շամտա տախի գօրէլա գու. հուրա կէլմիշ օլուպ, վալինին իս պարը իւզրէ, էհալինին պիր պէօ. իիւք գըսը խասթալանմըշ օլտը. ղը Սթանպօլտան Հոկտեմբեր 30 թարիխի թաւա պիւրտիւլմիշ տիր:

ՏԱԽԻԼԻԹԷ

Մաթէթոնիա գօմիթէսինին սա պրգ րէյիսի Մ. Միսալիլմաքի էվրոքայա կիթմիշ տիր: Մէրգում պիր կազէթա մուխպիրի իլէ կէօ րիւշմէսինտէ տէմիշ տիր քի' իշ. պու սէյաճաթընտան մագսէտի Մաթէթոնիա մէսէլէսի հազգընտա էվրոքալըն էֆքեարընը թէնվիր (լուսաւորի) էլլէմէք տիր: Մ. Մի. խալիլմաքի էն էվվէլ վիէննառա գալուճաք տըր:

— Բուսճուգ հիւքիւ մուլար գրուլ Գարօլ հազրէթլէրի շու կիւնլէրտէ Բուսճուգ թէշրիֆլէ Ֆէխամ. Բուէնա Ֆլարտինանտ հազրէթլէրինէ իտտէի վիզիթա իթմիշ օլաճաք տըր: Բրէնա պուլկար վիքէրտար իլէ պէրապէր Գուրլը սո. թէթիսա միմանէտէ գապուլ իտէճէք տիր:

Գրալըն պու թէշրիֆինի «Իտտէի վիզիթա» թէսմիլէ իթտիք, զիրա պուլտան տէօրտ սէնէ մուգատտէմ (1898 Յունիստէ) Բրէնա Ֆէրսի. նանտ հազրէթլէրի Բուսճուգիտա Բէլէշ սէյֆիլէսինտէ Գալ Գա. րօլը զիյարէթ իթմիշ վէ թարա ֆէյտէն սամիմանէ վէ դայէթ լա. թիֆ միւքեալմէլէր սէօյլէնմիշ վէ Բրէնա Գրալա պիր նիշ. տա ի իհտա էլլէմիշ իտի: Ֆս գաթ օզէ. մանտան պէրու հուլուլ իտէն տէօրտ սէնէ զարֆընտա' էնվալի սէպէպ. լէր իլէ իքի հէմհուրուտ հիւքիւ. մէթլէր պէյնինտէ Էօվուզլըք հա. սըլ օլմասընտան նաշի Գրալըն իտտէի վիզիթասը շիմտիյէ գա տար թէէթիլ օլընմըշ Էրա: Պու տէֆա Գրալ Գարօլ հազրէթլէրի. նին շու թէշրիֆի իքի միլլէթ պէյնինտէ մուհապէթի տօսթանէ հասըլ օլընտըրընը իմա իտէր, վէ մէմուլ ու արղու իւլէրիզ քի պու տէֆա տօսթլըրգ տէլամի վէ սա. միմի օլտուն:

ՍԵՐՊԻԱ

Գրալ Ալէքսանտըրըն Զարա զի. լարէթ իթմէսինին թէէթիլ օլըն. մասընա Սերպիտաա էնվալի մանլէր:

վէրիլմէսի վէ Մ. Վուիշին իս. թիֆասը պու սէպէպէ համլ օլըն. մասը Բէթերսպուրկտա թաանուպ հասըլ իթմիշ օլտըրը մահլէին. տէն րէսմէն պիւրտիւլմիշ տիր:

— Գրալիցս Տրականըն պիւրա տէրի Նիքօտէնին գրալիլէթէ վա. րիս թային օլընաճաղընա տայիր չըգմըշ օլան շայէաթըն սալ ու էսապ օլմատըրը վէ շու սըրատա Սերպիտաա էօյլէ պիր մէսէլէ իլէ իշթիղալ օլընմատըրը Պէլկրատտան պիւրտիւլիլօր:

Մալիւմ օլտըրը իւզրէ, Գրալ Ալէքսանտըրըն իզտիվաճըրտան իւշ ալ սօնրա Գրալիցս Տրակա էվլատ տօղուրաճաք տէյուլ պիր շայէա չըգ. մըշ Էրա: հալ պուքի Գրալիցս էօմրիւնին սօնուհա գստար վա լիտէ օլմալաճաղընա գանաաթ հալ օլտըրընտան' շիմտի տէ պի. րատէրինի Գրալ իթմէկէ չալըշը. յօր տէյօրլար, կէշէն սէնէ տախի պէօյլէ պիր շայէա չըգմըշ Էրա. ֆազաթ Գրալ Ալէքսանտըր պու շայէալը թէքքիպ լտուպ տէմիշ իտի:

«Շիմտիլիք բէտէր օլապիլմէք. տէն ի. միտիմի բ սմէմիշիմ. էկէր Ալլահ պանա պ'ր Էվլատ իհսան իթմէկ իսէ - պէնիմ վարիսիմին նասպ ու ինիլիսալընը Մէճլիս' Մէպուսանա ու Ալլանա իհալէ իտէ. ճէկիմ»:

ԿԸ ՓՆՏՈՌՈՒԻ

Զոր տարի առաջ Թուսճ. ք բնւ. կող Վիլի Զանախիճի գիւղէն Խաշիկ եւ Պետրոս Շիրինեան եղբայրներու հացէն գիտցողներէ կը խնդրուի որ հոսին հետեւեալ հասցէին տեղեկա. թիւն տալ:

Տ. Նազար Ստեփանեան
13, Դուսմ. Սթ. Ուսթը, Մէս.
(Մ. Ն. Ասիւրիկա)

ՍՐԱՆ "ՍԱՆԴՐԱՆ"

Վաղը, հինգշաբթի գիշեր Նաճիֆա (Յոյս) հայ գերասանակա խումբը պիտի ներկայացնէ «Կեղծ Լապալկը» կամ «13ներու ժողովին անգամը» թատերախաղը, 3 արար:

Ժիմաղաշարժ գաւեշտ 1 արար:
Ուրբաթ գիշեր պիտի ներ. կայացուի «Արդսր հնաժամաճը» կամ «Յիշատակելի ձեռնոցը» թատե. րախաղ 5 արար:
Սիստ ծիծաղաշարժ գաւեշտ մը:
Սովորական գին:

ԶՐԻ ԾՍԵՆ. ՅՈՒՍ
ԶԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻՐ

Պաշտօնական ազլւտու տղը (25 տուն)
10 սանդիլ:
Անհասական ազլւտու տղը (25 տուն)
20 սանդիլ:
Երեխաներու աւելիի հաւաք 20 0/0 զեղջ:
Փրիսարհներ դրաւ կամ նաւակա. դրու զրկել կանխիկ:

Оповоруктс Е. Драгуктс
Пев. на Хр. Н. Вайниковъ—В. риа